State of California

Health and Human Services

DHCS

CalMediConnect
Your choice for complete care

Z-

JOHN SAMPLE
1234 SAMPLE STREET
ADDRESS 2
ANYTOWN CA 90000

XX/XX/XXXX

Կարևոր տեղեկություն

Դուք ստանում եք այս նամակը, քանի որ ունեք Ե՛Վ «Medicare», Ե՛Վ «Medi-Cal»: Փոխվում է այն ձևը, որով Դուք բուժսպասարկում եք ստանում: Այժմ Դուք ավելի մեծ ընտրություն ունեք Ձեր առողջապահական կարիքները բավարարելու հարցում:

Սա երկրորդ նամակն է Ձեր տրամադրության տակ եղած ընտրության նոր տարբերակների մասին: Դուք կարող եք «Cal MediConnect»-ի որևէ ծրագիր ընտրել կամ մնալ սովորական «Medicare»-ում: Եթե Դուք որոշեք սովորական «Medicare»-ում մնալ, ապա պետք է «Medi-Cal»-ի որևէ ծրագիր ընտրեք՝ «Medi-Cal»-ի Ձեր նպաստները ստանալու համար: Եթե Դուք ոչինչ չընտրեք, մենք ինքներս «Cal MediConnect»-ի ծրագրերից մեկը կընտրենք Ձեզ համար:

Նախկինում Ձեր ստացած ծառայությունների և Ձեր առողջապահական կարիքների հիման վրա՝ Դուք ընդգրկվել եք «Cal MediConnect»-ի ստորև նշված ծրագրում: Եթե Դուք չորոշեք սովորական «Medicare»-ում մնալ, Դուք կարիք չունեք որևէ բան անելու, և Ձեր ապահովագրությունն այս ծրագրով կսկսի գործել:

MM/DD/YYYY: [Health Plan Name]

Այս փոփոխությունն ինչպե՞ս կազդի ինձ վրա:

«Cal MediConnect»-ի որևէ ծրագրի անդամագրվելով՝

- Դուք կպահեք «Medicare»-ի կամ «Medi-Cal»-ի Ձեր նպաստները՝ առանց լրացուցիչ ծախսեր կատարելու.
- Դուք կշարունակեք ստանալ բոլոր այն ծառայությունները կամ նպաստները, որոնք այժմ ստանում եք.
- Ձեր բոլոր բժիշկները, մասնագետները և այլ սպասարկողները, միմյանց հետ համագործակցելով, Ձեզ կտրամադրեն Ձեզ անհրաժեշտ բուժսպասարկումը.
- Դուք փոխադրման և ակնաբուժական լրացուցիչ նպաստներ կստանաք:

Z

Ինչպե՞ս է «Cal MediConnect»-ի ծրագիրն օգնում ինձ:

Այն փոփոխություն է մտցնում, քանի որ «Medicare»-ի և «Medi-Cal»-ի Ձեր նպաստները համատեղ են գործում և ավելի են օգնում Ձեզ:

Ձեր ընտրության տարբերակներն են՝

1. **Անդամագրվել «Cal MediConnect»-ի որևէ ծրագրի:** «Cal MediConnect»-ի ծրագրերը վճարում են և՛ «Medicare»-ի, և՛ «Medi-Cal»-ի ծառայությունների համար: Եթե Դուք «Cal MediConnect»-ի որևէ ծրագրի անդամագրվեք, «In-HomeSupportive Services»-ի (IHSS), «Multipurpose Senior Services Program»-ի (MSSP), «Community-Based Adult Services»-ի (CBAS) և ծերանոցային խնամքի ծառայությունները «Cal MediConnect»-ի ծրագրի միջոցով կստանաք: Նրանք վճարում ենք նաև ակնաբուժական ծառայությունների և փոխադրման համար: «Cal MediConnect»-ի ծրագիրը՝ Ձեր բժիշկների և սպասարկողների հետ համագործակցելով, հոգ կտանի, որ Դուք ստանաք Ձեզ անհրաժեշտ բուժօգնությունը:
2. **Անդամագրվել «Program of All-Inclusive Care for the Elderly» (PACE) ծրագրին:** Եթե Դուք 55 տարեկան կամ ավելի մեծ եք և ավելի բարձր մակարդակի խնամքի կարիք ունեք, որպեսզի կարողանաք Ձեր տանն ապրել, հնարավոր է, որ Դուք իրավասու լինեք PACE-ում ընդգրկվելու: PACE-ը տրամադրում է «Medicare»-ի և «Medi-Cal»-ի բոլոր նպաստները, բացի այդ՝ որոշ լրացուցիչ ծառայություններ, որոնք օգնում են քրոնիկական հիվանդություններ ունեցող տարեց անձանց շարունակել իրենց տանն ապրել:
3. **Անդամագրվել «Medi-Cal»-ի որևէ առողջապահական ծրագրի:** Եթե Դուք որոշեք սովորական «Medicare»-ում մնալ, Դուք չեք ընդգրկվի «Cal MediConnect»-ի որևէ ծրագրում, բայց այնուամենայնիվ, «Medi-Cal» ստանալու համար պետք է որևէ առողջապահական ծրագիր ընտրեք: «Medi-Cal»-ի որևէ ծրագրի անդամագրվելով՝ Դուք հնարավորություն կունենաք շարունակելու «Medicare»-ի Ձեր բժիշկների և հիվանդանոցների ծառայություններից օգտվել և չեք զրկվի որևէ ծառայությունից: «In-HomeSupportive Services»-ի (IHSS), «Multipurpose Senior Services Program»-ի (MSSP), «Community-Based Adult Services»-ի (CBAS) և ծերանոցային խնամքի ծառայությունները Դուք ծրագրի միջոցով կստանաք:

Այժմ ես ի՞նչ պետք է անեմ:

Մտածեք վերը նշված երեք տարբերակների մասին և որոշեք, թե որն է ամենալավը Ձեզ համար: Օգտվեք առողջապահական ծրագրի «Ուղեցույցից» և «Ընտրության գրքույկից», որոնք փոստով կստանաք «Health Care Options»-ից՝ որպես օգնություն: Խոսեք Ձեր բժիշկների և այլ սպասարկողների հետ և պարզեք, թե որ ծրագրերի հետ են աշխատում:

«Cal MediConnect»-ի ստորև նշված ծրագրին անդամագրվելու համար որևէ բան անելու անհրաժեշտություն չկա:

Եթե Դուք <u>չեք</u> ցանկանում անդամագրվել [Health Plan Name,]
կարող եք դիմել «Health Care Options»-ին և «Cal MediConnect»-ի մեկ այլ ծրագիր ընտրել կամ մնալ սովորական «Medicare»-ում: «Health Care Options»-ին հարկավոր է դիմել մինչև MM/DD/YYYY.

«Health Care Options» կարելի է զանգահարել ստորև նշված հեռախոսահամարով ԿԱՄ կարելի է լրացնել «Ընտրության թերթիկը» և ուղարկել կից ծրարի մեջ: Թերթիկը կգտնեք Ձեր «Ընտրության գրքույկի» մեջ, որը փոստով ստանալու եք «Health Care Options»-ից:

Օգնության կամ լրացուցիչ տեղեկությունների համար

Եթե ցանկանում եք այս փոփոխությունների և Ձեր տրամադրության տակ եղած ընտրության տարբերակների մասին խոսել առողջության ապահովագրման հարցերով որևէ խորհրդատուի հետ, զանգահարեք **«California Health Insurance Counseling & Advocacy Program»** (**HICAP**)՝ **1-800-434-0222 հեռախոսահամարով:**

Եթե հարցեր ունեք «Medicare»-ի վերաբերյալ, զանգահարեք 1-800-MEDICARE (1-800-633-4227)՝ օրը 24 ժամ՝ շաբաթը 7 օր: TTY-ից օգտվողները պետք է զանգահարեն 1-877-486-2048:

Եթե ցանկանում եք «Cal MediConnect»-ի մեկ այլ ծրագիր ընտրել, մնալ սովորական «Medicare»-ում կամ այս նամակը ստանալ մեկ այլ լեզվով կամ այլընտրանքային ձևաչափով, օրինակ՝ խոշորատառ, ձայնագրված կամ Բրայլի գրատիպով, խնդրում ենք զանգահարել «Health Care Options»՝ երկուշաբթի-ուրբաթ օրերին, ժամը 8-ից 17-ը՝ 1-844-580-7272 կամ TTY՝ 1-800-430-7077, հեռախոսահամարով:

Լրացուցիչ օգնության համար զանգահարեք «**Cal MediConnect**»-ի **Ombudsman**»-ին՝ 1-855-501-3077 հեռախոսահամարով: Այս համարը գործելու է 4/1/2014-ից:

Հաճախակի տրվող հարցեր և պատասխաններ

1. Ի՞նչ տարբերություն կա «Medicare»-ի և «Medi-Cal»-ի միջև:

«Medicare»-ը և «Medi-Cal»-ը երկու տարբեր ծրագրեր են, որոնք վճարում են դրանցից օգտվելու պահանջներին համապատասխանող անձանց ստացած տարբեր ծառայությունների համար: Երբ Դուք ընդգրկվում եք «Cal MediConnect»-ի որևէ ծրագրում, «Medicare»-ի և «Medi-Cal»-ի Ձեր նպաստները համատեղվում են և ավելի արդյունավետ են գործում Ձեզ համար:

- **«Medicare»**-ը վճարում է բժշկական ծառայությունների, օրինակ՝ բժիշկների, մասնագետների, հիվանդանոցների և դեղատոմսով տրվող դեղերի համար: «Medicare»-ը վճարում է նաև բժշկական սարքավորումների և տանը տրամադրվող բուժօգնության համար:
- **«Medi-Cal»**-ը վճարում է այն ամենի համար, ինչի համար «Medicare»-ը չի վճարում, այդ թվում՝
  a. չապահովագրված մասի.
  b. IHSS-ի, CBAS-ի, MSSP-ի և ծերանոցային խնամքի.
  c. փոխադրման և բժշկի այցելությունների.
  d. այնպիսի բժշկական սարքավորումների և պարագաների, ինչպիսիք են, օրինակ՝ վիրակապերը և տակաշորերը:

2. Ի՞նչ առավելություններ է տալիս «Cal MediConnect»-ի ծրագրին անդամագրվելը:

- Դուք «Medicare»-ի և «Medi-Cal»-ի Ձեր բոլոր նպաստները, այդ թվում՝ բժիշկների և հիվանդանոցների ծառայություններն ու դեղատոմսով տրվող դեղերը, մեկ առողջապահական ծրագրով եք ստանում:
- Դուք մեկ անդամության քարտ կստանաք և մեկ հեռախոսահամար, որով կարող եք զանգահարել, երբ օգնության կարիք ունենաք:
- Դուք ակնաբուժական օգնություն կստանաք և փոխադրամիջոց՝ բժշկի այցելությունների համար:
- Կարող եք զանգահարել բուժքույրական խորհրդատվության շուրջօրյա հեռախոսահամարով և օգնություն ստանալ:
- Կարող եք Ձեր բուժսպասարկումը համակարգող աշխատակից ունենալ: Նա կպատասխանի Ձեր հարցերին, կօգնի համայնքային ծառայություններ գտնել, բժշկի մոտ ժամադրություն ստանալ և խոսել Ձեր բժիշկների հետ:
- «Cal MediConnect»-ի Ձեր ծրագիրը Ձեզանից կտեղեկանա, թե ինչ տիպի բուժօգնություն է Ձեզ անհրաժեշտ, և Ձեզ հետ միասին բուժսպասարկման անհատական ծրագիր կկազմի՝ հիմնված Ձեր նպատակների վրա:

3. Ինչպե՞ս վստահ լինեմ, որ իմ բուժսպասարկումը կշարունակվի «Cal MediConnect» ծրագրում ընդգրկվելուց հետո:

«Cal MediConnect»-ի Ձեր նոր ծրագիրը պարտավոր է հոգ տանել, որ Դուք Ձեզ անհրաժեշտ բարձրակարգ բուժսպասարկումը ստանաք: Անդամագրվելուց հետո «Cal MediConnect»-ի Ձեր ծրագիրը կզանգահարի Ձեզ և կտեղեկանա, թե ինչ տիպի բուժսպասարկում է Ձեզ անհրաժեշտ: Ձեզ հետ խորհրդակցելով՝ նրանք հոգ կտանեն, որ Դուք ստանաք այն բոլոր ծառայությունները, որոնց կարիքն ունեք:

Եթե Ձեզ ժամադրություն է նշանակված, և Դուք փոխում եք Ձեր առողջապահական ծրագիրը, անմիջապես զանգահարեք «CalMediConnect»-ի Ձեր նոր ծրագիր: Ծրագրին տեղեկացրեք սպասվող բուժման մասին, որպեսզի նրանք կարողանան Ձեզ հետ միասին կազմակերպել այն:

- **Եթե Ձեզ սպասարկում է մի բժիշկ, որն ընդգրկված չէ առողջապահական ծրագրի ցանցում,** կարող եք մինչև վեց ամիս շարունակել այցելել այդ բժշկին, եթե վերջինս համաձայնի Ձեր նոր առողջապահական ծրագրի սակագներին և որակի հետ կապված խնդիրներ չունենա:
- **Եթե Դուք «Medi-Cal»-ի ծերանոցում եք գտնվում,** «Cal MediConnect»-ը Ձեզ և Ձեր խնամքով զբաղվող խմբի հետ միասին աշխատելով՝ հոգ կտանի, որ Դուք Ձեզ անհրաժեշտ խնամքը ստանաք: Դուք կարող եք ծերանոցում մնալ:

4. Ի՞նչ կարող եմ անել, եթե անդամագրվեմ «Cal MediConnect»-ի կամ PACE-ի որևէ ծրագրի, և այն ինձ դուր չգա:

Ցանկացած ամիս Դուք կարող եք դուրս գալ «Cal MediConnect»-ից կամ PACE-ից և վերադառնալ սովորական «Medicare» ծրագիր կամ «Medicare Advantage» ծրագիր: Այդ անելու համար զանգահարեք «Health Care Options»՝ 1-844-580-7272 (TTY՝ 1-800-430-7077) հեռախոսահամարով կամ Ձեր առողջապահական ծրագրին ասացեք, որ ցանկանում եք դուրս գալ ծրագրից: Առողջապահական ծրագիրը կարող է օգնել Ձեզ ընտրություն կատարելու հարցում:

- Հիշեք, որ «Medi-Cal»-ի Ձեր նպաստների համար Դուք կշարունակեք առողջապահական ծրագրում ընդգրկված մնալ: Ծրագրից դուրս գալն ազդում է միայն այն բանի վրա, թե Դուք ինչ կերպ եք ստանում «Medicare»-ի Ձեր նպաստները:

5. Ի՞նչ են «Long Term Services and Supports»-ները: Ինչպե՞ս են դրանք գործում առողջապահական ծրագրի ներսում:

«Long Term Services and Supports»-ները (LTSS) «Medi-Cal»-ի նպաստներ են, որոնք օգնում են շարունակվող անձնական խնամքի հարցում: Առողջապահական ծրագրի ներսում այս ծառայությունները և աջակցությունը կգործեն ճիշտ այնպես, ինչպես այսօր են գործում:

Ձեր առողջապահական ծրագիրը կաշխատի Ձեր բժիշկների և LTSS-ի սպասարկողների հետ: Եթե այժմ Դուք այդ ծառայությունները չեք ստանում, Ձեր առողջապահական ծրագիրը կարող է հետագայում օգնել Ձեզ դրանք ստանալու հարցում, եթե դրանք բժշկական առումով անհրաժեշտ լինեն:

- **In-Home Supportive Services (IHSS):** Անձնական խնամքի ծառայություններ այն անձանց համար, ում օգնություն է հարկավոր սեփական տանն ապահով ապրելու համար:
  - ▶ Եթե Դուք IHSS եք ստանում, Ձեր ծառայությունները որևէ փոփոխություն չեն կրի: Դուք կարող եք պահել IHSS-ի Ձեր սպասարկողներին և կարող եք նրանց վարձել, ազատել և կավառարել: Այժմվա նման՝ IHSS-ի շրջանային սոցիալական աշխատողը կգնահատի Ձեր կարիքները և կհաստատի IHSS-ի Ձեր ժամերը: Բողոքարկելու Ձեր իրավունքները նույնը կմնան: Եթե ցանկանաք, Ձեր առողջապահական ծրագիրը կարող է Ձեզ և IHSS-ի Ձեր սպասարկողների հետ միասին ապահովել, որ Դուք ստանաք Ձեզ անհրաժեշտ խնամքը:
- **Community-Based Adult Services (CBAS):** Սրանք որոշ քրոնիկական հիվանդություններ ունեցող անձանց խնամք, բուժում, ժամանց և սնունդ տրամադրող կենտրոններում գործող ցերեկային ծառայություններ են:
  - ▶ Այնտեղ, որտեղ այդ ծառայությունները տրամադրվում են, Ձեր առողջապահական ծրագիրը՝ Ձեզ և Ձեր բժշկի հետ միասին աշխատելով, կապահովի դրանց տրամադրումը, եթե Դուք դրանց կարիքն ունենաք: Եթե Դուք CBAS եք ստանում, Ձեր ստացած ծառայությունները որևէ փոփոխություն չեն կրի:
- **Multipurpose Senior Services Program (MSSP):** Սրանք սոցիալական և բուժսպասարկումը համակարգող ծառայություններ են՝ 65 տարեկան կամ ավելի մեծ անձանց համար:
  - ▶ Եթե Դուք MSSP ծառայություններ եք ստանում, Դուք կշարունակեք ստանալ դրանք MSSP-ի Ձեր ներկա սպասարկողի կողմից: Ձեր առողջապահական ծրագիրը կհամագործակցի նրանց հետ, որպեսզի ավելի լավ կազմակերպի Ձեր խնամքը:
- **Ծերանոցային խնամք:** Ձեր առողջապահական ծրագիրը կհամագործակցի Ձեր բժշկի և ծերանոցի հետ, որպեսզի Ձեզ շարունակեն տրամադրվել այն ծառայությունները, որոնք Դուք այժմ եք ստանում և ավելի լավ կազմակերպվի ձեր խնամքը:

6. Ես չեմ օգտվում «Medi-Cal Long Term Services and Supports»-ի նպաստներից: Ինչու՞ պետք է ես անդամագրվեմ որևէ առողջապահական ծրագրի:

Այս ընտրության նպատակը «Medi-Cal»-ի Ձեր ստացած ծառայություններն ավելի լավ կազմակերպելն է: Եթե Ձեզ անհրաժեշտ են «Long Term Services and Supports», առողջապահական ծրագիրը կօգնի Ձեզ: Բացի այդ, առողջապահական ծրագրում Դուք կարող եք փոխադրամիջոց ստանալ՝ բժշկի այցելությունների համար, և օգտվել բուժքույրական խորհրդատվության շուրջօրյա հեռախոսագծից: «Medi-Cal»-ի առողջապահական ծրագրերը կվճարեն «Medicare»-ի բոլոր այն լրացուցիչ ծախսերը, որոնք այսօր վճարում է Նահանգը, օրինակ՝ չապահովագրված մասը: